բութեան կողմն է և այդպէս էլ կը մնայ, որովհետև փորձուած և իմաստուն հայ ժողովուրդը աւանտիւրիստների յետևից չի գնայ։ Ինչ վերաբերում է ձեր այն ստին, որ գիւղացիական զանգուածները բռնուած են քաղաքացիական կուռվ, պիտի ասեմ, որ հայ գիւղացին դատարկ բաներով զբաղուող չէ։ Մեր կողմից ոչ ոք ձեզ չի լիազօրել միջնորդի դեր ստանձնելու, որովհետև մենք ո՛չ բանակցութիւններ ենք վարում բախտախնդիր մարդկանց հետ և ոչ էլ ձեզ նման միջնորդի կարիք ունենք։ մեր խնդրանք ներկայացուցիչներին շուտով կը տեսնէք Ալեքսանդրապոլում։ Եթէ հայ արիւն է թափւում, մենք գիտենք, թէ ում յանցանքի պատճառով է այդ»։

Եւ, յիրաւի, ապստամբների վիճակը լաւ չէր Ալեքսանդրապոլում։ Շարժման սկզբին նրանց էր յարել և զօրքի մի մասը։ Սպայութիւնը՝ զօրքի ամբողջութիւնը փրկելու և ներքին կռիւների պատճառ չտալու հաշուով՝ նոյնպէս ճանաչել էր ռազմա-յեղափոխական կոմիտէի իշխանութիւնը։ Բանակն իր կողմը գրաւելուց յետոյ՝ ռազմա-յեղափոխական կոմիտէն իր իշխանութիւնը տարածել էր և քաղաքի վրա, ուր հին պաշտօնէութիւնը յայտարարւել էր հեռացած և ներքին գործոց կոմիսար Մելքոնեանի կողմից նշանակուած էին նոր կոմիսարներ։ անասնաբոյժ Պրիբիլսկի՝ ինքնապաշտպանութեան շտաբի պետ։ Սիկորսկի՝ թնդանօթաձիգների կոմիսար։ Ամատունի (հնչակեան)՝ քաղաքային միլիցիայի պետ։ Լևոն Սարգսեան՝ պարենաւորման կոմիսար։ Կօչուբինսկի՝ Կազաչի Պոստի պետ և այլն։ Այս կոմիսարները փաստօրէն ո՛չ մի ազդեցութիւն չունէին, որովհետև քաղաքի ազգաբնակութիւնը հէնց սկզբի օրերից թշնամական դիրք բռնեց դէպի ըմբոստները։ Բազմամարդ ժողովների մէջ քաղաքացիները դատապարտեցին խռովարարների ընթացքը և նոյնիսկ փորձեր արին գրաւելու կայարանը, բայց զրահապատի թնդանօթները արգելք եղան։ Քաղաքացիների այս վերաբերումը անդրադարձաւ և զօրքի տրամադրութեան վրա։ Հետզհետէ ամենքը տեսան, որ ապստամբները, իրօք, մի խումբ բախտախնդիրներ են, որոնց ոյժն ու իշխանութիւնը զրահապատի սահմաններից դուրս չի տարածւում։

Ա. Մելքոնեանի փորձի վիժումից յետոյ ապստամբները Լ. Սարգսեանից ու Հ. Զոլախեանից կազմուած յատուկ պատուիրակութիւն ուղարկեցին կառավարական զօրամասի հրամանատարի մօտ։ Պատուիրակութիւնը խնդրեց յառաջխաղացումը դադարեցնել և իրեն արտօնութիւն տալ գնալու Երևան՝ կառավարութեան հետ բանակցելու համար։ Զօրամասի պետը, կառավարութեան հրահանգն ստանալուց յետոյ, յայտնեց, որ ինքը լիազօրութիւն ունի հարցը տեղն ու տեղը վճռելու և յառաջխաղացումը չի կանգնեցնի, սակայն, պատրաստ է հարցը առանց կռուի լուծելու՝ պայմանով, որ ամենաուշը մինչև մայիսի 14-ի առաւօտեան ժամը 6 ռազմա-յեղափոխական կոմիտէն անձնատուր լինի և զրահապատ գնացքը յանձնէ անվնաս։

Մայիս 13-ի գիշերը ապստամբները թողին զրահաղնացքը և փախան՝ ոմանք դէպի Աղբարա՝ թուրքերի մօտ, ոմանք պահուեցին քաղաքում։ Մայիս 14-ի առաւօտեան հանրապետական զօրքերը, առանց կռուի, մտան քաղաք և խանդավառ ընդունելութիւն գտան ազգաբնակութեան կողմից։ «Վարդան